Տնտեսական հրաշքները. գործարկման ուղիները Հայաստանում, խմբ.՝ Քրիստինա Բաղդասարյան, Երևան, «ՎԱՌՄ» ՍՊԸ, 2020, 480 էջ:



1990-ական թթ. հետխորհրդային երկրները դիմորոշվում են դեպի շուկայական տնտեսաձևը: Սկիզբ է առնում վերափոխությունների, որոնումների ու նոր համակարգի լինելությունը՝ դիտակետ ունենալով ո՞րն է ճիշտ և ո՞րը՝ սխալ, ո՞րն է ազգայինը, և որ՞ը՝ համաշխարհայինը, ո՞րն է ընդունելի, և ո՞րը՝ մերժելի հարցերը: Այս իմաստով հատկապես ուշագրավ է 2007 թ. ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտաժողովների ավանդույթը: Դրանք ինչպես գործնականում, այնպես էլ տեսականորեն շատ կարևոր են հանրապետության տնտեսության մեջ կատարվող տեղաշարժերի բնութագրության, թերությունների բացահայտման ու նոր որոնումների առումներով: Սույն ժողովածուի խորագիրը՝ «Տնտեսական հրաշքները. գործարկման ուղիները Հայաստանում», արդեն իսկ ընդգծում է դրա որոշակի ուղղվածությունը: Ինչպես ներածականում նշում է գիտական խմբագիր Վ. Հարությունյանը, այն «ընթերցողին հնարավորություն է տալիս առանց տարբեր աղբյուրների (էլեկտրոնային կամ տպագիր) դիմելու տեղեկություն ստանալ վերջին 70 տարիներին տարբեր երկրներում իրականացված, տնտեսական կյանքի վրա էական ազդեցություն թողած բարեփոխումների պատճառների, ընթացքի և արդյունքների մասին» (էջ 16): «Տնտեսական հրաշքի» երկրների հետագիծը դարձել է պատմություն: Հայտնի ճշմարտություն է, որ պատմությունը ոչ միայն անցյալի հայելին է, այլ նաև ներկայիս խորհրդատուն, այստեղից էլ նրա հորդորը՝ «դասեր քաղել պատմությունից»: Ինչ խոսք, այդ փորձի յուրացումը օգտակար կարող է լինել ազգային տնտեսական շինության համար, սակայն տնտեսագիտությունն ունի իր իմանենտ օրենքները, ուստի առկա հիմնախնդիրների լուծման հեղափոխական պաթոսը՝ որպես կարգախոս, իր իրական բովանդակությամբ, Վ. Միր-

զոյանին ներկայանում է երկրում «տնտեսական, քաղաքական և սոցիալական կայունության ապահովումը» (էջ 27):

Անհրաժեշտություն չեմ տեսնում անդրադառնալու աշխատության մեջ ներկայացված բոլոր երկրների վերաբերյալ արծարծումներին: Դրանք իրարից կտրված իրողություններ չեն, որոնք վերափոխությունների ընթացքում կոնկրետ հանգամանքներով իրականացրել են բարեփոխումների ընդհանուր վավերացում ստացած պետական սեփականության մասնավորեցման, մենաշնորհների, անձնական ազատության ու տնտեսական ազատականացման, մրցակցության, հասարակության մեջ պետության նկատմամբ պատեռնալիստական վերաբերմունքի հաղթահարման և, սոցիալական ապահովության հիմքում դնելով սեփական նվաճումների պահվածքի սկզբունքները, տնտեսական գործունեության խաղի կանոնների, հարկային, մաքսային օրենսդրական դաշտի մշակումները և այլն:

Հայտնի է, որ տասնամյակներ շարունակ խորհրդային տնտեսագիտական միտքը գերազանցապես գործել է, այսպես կոչված, «զուտ տնտեսագիտության» ոլորտում՝ ուշադրության չառնելով տնտեսագիտության հետ ոչ կապակից թվացող երևույթները, անտեսելով «մշակութային» գործոնի նշանակությունը: Ս. Դալլաքյանը հենց այդ կետից է Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման ու զարգացման ընթացքը դիտարկում էթնոմշակութային, ճապոնական մենեջմենթի (խմբին նվիրվածության, կորպորատիվ ոգու արմատավորման ու որոշումների կայացման գործընթացների բաղադրիչների) և ֆինանսական գործոնների միասնության մեջ: Երկրի «տնտեսական հրաշքը» պայմանավորող 11 գործոններից նա հատկապես առանձնացնում է ավանդական ընտանիքը, որն իր ուրույն տեղն ունի «ինքնություն-անհատ-ազգ եռաշերտ միասնության մեջ»: Ու թեև արդյունաբերական ու խոշոր ընկերությունների ի հայտ գալով ավանդական ընտանիքը ենթարկվել է որոշ գործառութային փոխակերպությունների, սակայն հասարակության խմբային կողմնորոշումը պահպանել է իր կենսունակությունը: Որպես զուգահեռ՝ նա նկատում է, որ թեև ավանդական ընտանիքի գաղափարախոսությունը պահպանվում է հայ իրականության մեջ, սակայն բացակայում է ֆիրմայում կորպորատիվ ոգին՝ դրա արմատավորումը դիտելով որպես հայ ազգային պահվածքի փոխակերպության ձգտումներից մեկը (էջ 214):

Տնտեսական պատմության հետաքրքիր էջեր ունի Իսրայելը՝ Մ. Մանուչարյանի և Մ. Մուրադյանի բնութագրությամբ՝ յոթ տասնամյակներով ձևավորված պարադոքսների մի երկիր. «թվում էր, թե տարածաշրջանում ամեն ինչ դեմ էր նրա գոյությանը, նույնիսկ բնությունը» (էջ 302): Գտնվելով «մշտական պատերազմի» մեջ՝ այդ անապատային օազիսը ապահովում է իր պա-

րենային պահանջարկի 95 տոկոսը՝ Մերձավոր Արևելքում հասնելով կյանքի ամենաբարձր մակարդակի: Այն առաջատար դիրքերում է գիտության, առողջապահության, բարձր տեխնոլոգիաների և այլ ոլորտներում: Երկրի վերելքը պայմանավորող գործոնների համակարգում հատկապես կարևորվում է մարդկային ռեսուրսի գործոնը, այդ ժողովրդի անկռահելի բնազդը և շատ ուսանելի այն ընդհանուրը, «ինչը նրանց օգնել է գոյատևել նույնիսկ ամենաբարդ ժամանակներում. դա նրանց միասնականությունն է»:

Գրականության մեջ կարելի է հանդիպել կարծիքների, որ իսլամը խոչընդոտում է ազատության, գիտության և տնտեսական զարգացումը: Մինչդեռ այլ պատկեր են ցուցադրում Մալայզիայի ու Միացյալ Արաբական Էմիրությունների «տնտեսական հրաշքների» վերաբերյալ ժողովածուի մեջ բերված ուրվագծերը: Կարգախոս ունենալով, թե «մալայզիացիները եվրոպացիների պես մարդիկ են, և ինչ կարող են անել նրանք, կարող ենք նաև մենք և նույնիսկ ավելի լավ», երկրի տեսլականը կառուցելով մալայա-իսլամական մշակութային արժեքների վրա, փոփոխությունների հիմքում դնելով արևմտյան և ազգային սկզբունքների զուգորդումը (Ք. Բաղդասարյան, Ս. Մարգարյան): Դա այն է, ինչ կոչվում է «կորպորատիվ ազգայնականություն»: Տնտեսության զարգացման գերակայությունների ու համեմատական առավելությունների ճիշտ հաշվառման և ամբողջ հասարակական շահի վրա հիմնված սոցիալական քաղաքականությունը դարձան վերելքի երաշխիքները: Վերը նշված հայեցության մերժում է ենթադրում Դուբայի տնտեսական հեղափոխության փորձի վերլուծականը: Դա համապատասխան օրինակների և վիճակագրական մի ամբողջ տեսություն է, որը ցույց է տալիս, թե մարդկային կապիտալի արդյունավետ կառավարումը ինչ թռիչքային արդյունքներ կարող է բերել գիտելիքահենք տնտեսության ստեղծման, գիտության, տեխնոլոգիաների, կրթության և տնտեսության ամենատարբեր ոլորտներում: Հայաստանում այդ փորձի հնարավոր օգտագործման տարրերի առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Գ. Վահանյանի առաջարկությունները.

ա) վարչապետին կից ստեղծել կրթության, գիտության և նորարարության հանձնաժողով, որը պետք է մշակի ռազմավարական ազգային քաղաքականություն, համակարգի ոլորտները և գնահատի բոլոր ծրագրերը,

բ) զարգացնել ՀՀ մտավոր սեփականության տնտեսությունը, նպաստել գիտելիքի առևտրայնացմանը, խթանել համալսարաններում տեխնոլոգիաների արտահանման գործակալությունների ստեղծումը: ...սահմանափակել ուղեղների, գիտելիքի և մտավոր սեփականության կապիտալի անվերահսկելի արտահանումը,

գ) կրթության, գիտության և նորարարության գործառույթները համակարգելու և զարգացնելու նպատակով կառավարության բոլոր օղակների աշխատակազմերի հաստիքացուցակները համալրել պատասխանատուներով (էջ 416):

Ժողովածուի պրոբլեմատիկայի շրջանակում Վ. Խաչատուրյանն ու Ա. Խաչատուրյանն անդրադառնում են հետխորհրդային երկրներից Վրաստանում իրականացված «վարդերի հեղափոխության» վերաբերյալ հակասական դիտարկումներին՝ որոնելով այն հարցի պատասխանը, թե «ինչո՞ւ Վրաստանում ստացվեց»: Անցման շրջանին բնորոշ տնտեսության անկման, գործազրկության ու գնաճի բարձր մակարդակների պայմաններում որպես առաջընթացը պայմանավորող հատկանիշ հռչակվեց «Զրո հանդուրժողականություն կոռուպցիայի հանդեպ» նշանաբանը: Գոյություն ունի մի հայտնի օրինաչափություն, երբ օրենքները մշտապես արտագրվում են, երբ դրանք ընդհարվում են իրականության հետ, ինչպես ռուսական ասացվածքում է՝ «օրենքների խստությունը փոխհատուցվում է դրանց ոչ պարտադիր կատարմամբ»: Վրաստանում այդպես չկատարվեց՝ «կարողանալով կտրել պետության և կազմակերպված հանցագործության կապը» (էջ 331): Եվ ծայր առան ապաբյուրոկրատացման, մասնավորեցման և ազատականացման գործընթացները:

Սույն ժողովածուն կառուցված չէ այլ երկրների փորձի հնարավոր օգտագործման տարրերի տեղայնացման արհեստական շեշտադրումների սկզբունքի վրա: Ընդհանրապես ինստիտուցիոնալ փոխակերպությունները հարուստ են հակասական դրսևորումներով: Դա հատկապես շուկայական տնտեսությանն անցման շրջանում գտնվող երկրներին բնորոշ առանձնահատկություններից է, երբ առկա սոցիալ-տնտեսական մթնոլորտը, ժամանակը մարդկանց պահվածքի համար գծում են տարբեր չափումներ: Այս իմաստով ուշագրավ է Լ. Սարգսյանի՝ Սինգապուրի վերաբերյալ ուսումնասիրությունը: Հարկ չկա անդրադառնալու Սինգապուրի տնտեսական վերափոխումների կամ Հայաստանի հետ ունեցած զուգահեռների՝ հեղինակի քննությանը: Այդ փաստարկներից զատ, հեղինակը ոչ թե սինգապուրյան փորձի օգտագործման արհեստական հնարավորություններ է փնտրում, այլ ցույց է տալիս այն տարբերությունները, որոնք կիրառելու ժամանակ կարող են դիմառնել հանրապետությունում կատարվող փոփոխություններին՝ որպես ծուղակների: Առաջին հերթին, դա վերաբերում է կոռուպցիայի գործոնին: Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարը, որ եզրեր ունի Սինգապուրի փորձի հետ, կարող է միաժամանակ բախվել երկու ծուղակների՝ «ժողովրդավարական ծուղակի և մեդալի երկու կողմերի անհամադրելիության ծուղակի»: Առաջինի իմաստն այն է, որ պետական պաշտոնյաների աշխատավարձերի բարձրա-

ցումն առաջ է բերում բնակչության դժգոհությունը, իսկ դրան տեղի տալու դեպքում, կարելի է կորցնել փորձառու մասնագետներին պետական կառավարման համակարգում ներառելու հնարավորությունը: Դա արտահայտում է այն իրողությունը, համաձայն որի, «ներկայիս կառավարման գործընթացը կձախողվի մեդալի երկու կողմերի անհամադրելիության ցանկացած իրավիճակում և այն դեպքում, երբ պատասխանատու պաշտոններում ներառված լինեն լավագույն մասնագետներ, որոնց աշխատավարձը չի համապատասխանում մասնավոր ոլորտում նրանց ստացած այլընտրանքին, և այն դեպքում, երբ պատասխանատու պաշտոնների համար նախատեսվի մասնավորին համարժեք աշխատավարձ, սակայն այդ պաշտոնները վստահեն ոչ լավագույն մասնագետների» (էջ 195):

Լ. Սարգսյանը վերլուծական սլաքն ուղղում է մի այլ՝ անկատարության և անորոշության ծուղակի հնարավորությանը: Սինգապուրի տնտեսական վերափոխությունները կառուցված էին դինամիկ քաղաքականության, հեռատեսության և հաստատակամության ռազմավարական սկզբունքների վրա, ինչպես նախորդ, այնպես էլ ապագայի համար: Մինչդեռ հանրապետության տնտեսությունը տարիներ շարունակ ցուցաբերում էր անկայունության և անորոշության մթնոլորտ, որի առանձին տարրերից զերծ չեն նաև ներկայիս «պետական ռազմավարական ծրագրերը»: Թեկուզ այն, թե անցյալ տասնամյակներին որքան առաջարկություններ են արվել, որքան փոփոխություններ հարկային օրենսդրության կատարելագործման, դրա պարզեցման, համակարգի կայունության և թափանցիկության ապահովման, չեզոքության բարձրացման, բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Կատարած տարբերակումը կարևոր է այն իմաստով, որ անկատարության և անորոշության շարունակական վիճակը չի կարող համատեղվել «հեղափոխության զարգացման» ակնկալությունների հետ: Նա «ծուղակները որոնում է տնտեսական իրականության քննադատությամբ, ինչպես, օրինակ, «ջայլամի» ծուղակը, համաձայն որի, այն բոլոր դեպքերում, երբ ռազմավարության միջոցառումները չեն հստակեցվում ոչ հասցեատերերի, ոչ ժամկետների, ոչ էլ չափելիության թիրախային ցուցանիշների առումներով, տեղի են ունենում ելակետի ու ավարտի խզումներ: Առավել վտանգավոր է տնտեսական գործառույթների կրկնության ծուղակը, ոչ միայն սխալների կրկնության, այլև նախատեսված գործառույթների թերակատարման, իսկ հաճախ՝ չիրականացման առումներով» (էջ 196-198):

Շատ են ժողովածուում դիտարկվող այլ երկրների (Գերմանիա, Հարավային Կորեա, Չիլի, Իտալիա, Իսպանիա և այլն) փորձի ուրվագծերը: Վ. Հարությունյանն ընդհանրացնում է այդ փորձը, առանձնացնում շուրջ երկու

տասնյակի հասնող երկրների տնտեսությունների արդիականացման հետագծերը՝ որպես տնտեսական հեղափոխությունների դրսևորումներ, կատարում կիրառական առաջարկություններ՝ դրանց իրացումներում կարևորելով հայրենասիրության ու միասնականության անհրաժեշտությունը: Նա այդ երկրների փորձի հիմքում է տեսնում հանրապետության հետագա բարեփոխումների ընթացքը (էջ 60-63):

Համադրության մեթոդը հաճախ կարող է պատճառ դառնալ գայթակղության: Յուրաքանչյուր երկրի ուղին յուրահատուկ է: Կա մի հայտնի արտահայտություն. խելոքները սովորում են ուրիշի սխալներով, անգետները՝ սեփական: Վտանգավորն այն է, որ չի արվում ոչ՛ մեկը և ոչ՛ էլ մյուսը: Նույնությամբ կրկնել որևէ երկրի փորձը հնարավոր չէ, բայց իմանալ պետք է: Սույն ժողովածուն կարող է նպաստ բերել Հայաստանի տնտեսությանը, զարգացման նոր որոնումներին:

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր